

Նարինե ԶԱԶԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՔԵՐՈԼ ՄԻԼՖՈՐԴԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԲԱԽՈՒՏԸ ՄԻՆՔԼԵՐ ԼՈՒԻՍԻ «ԳԼԽԱՎՈՐ ՓՈՂՈՑԸ»
ՎԵՊՈՒՄ**

Հոդվածում ուսումնասիրվում է քասմերորդ դարի ամերիկացի գրող, ռեալիզմի ներկայացուցիչ Սինքլեր Լուիսի «Գլխավոր փողոց» վեպը: Քննվում է այն մեծ բախումը, որ ծագել էր վեստի հերոսուհու՝ Քերոլ Սիլֆորդի և նրան շրջապատող հասարակության միջև: Համոզիչ կերպով և օրինակներով ներկայացվում են թե՛ հերոսուհու պայքարի էությունը և թե՛ նրա աճխուսափելի պարտությունը: Սյայնակ պայքարերով համբնդիանուր տղիտության դեմ՝ հերոսուհին ի վերջո հասկանում է, որ ամենարող է ի կատար ածել իր երազանքը՝ բարեկինիւել որևէ զավառական քաղաք:

Բանալի բառեր. Սինքլեր Լուիս, «Գլխավոր փողոց» վեպը, քննադատական ռեալիզմ, ամերիկյան հասարակություն, ըմբուստ կերպար, զավառական քաղաք, համատարած տղիտություն

Բոլոր ժամանակներում և բոլոր դարերում մարդու ուսումնասիրության առանցքային խնդիրներից մեկը եղել ու մնում է հենց ինքը՝ մարդը: Եվ բեպետ մարդը մի չնշին էակ է տիեզերքում՝ աննշան իր մեծությամբ և կարճատև իր գոյությամբ, բայցն մարդու էության ու անէության, գոյի և ոչ գոյի, կյանքի, մահվան, ժամանակավոր և հավիտենական ներկայության խնդիրների շուրջ ծավալվող վեճերն այնքան բուռն են դարձել վերջերս, որ երբեմն հարց է առաջանում, թե որն է ավելի մեծ՝ տիեզե՞րքը, որի հիրավի տի՝ մեծ եզերքն անգամ նորագույն սարքավորումներով անհնար է որոշել, թե նարդը, ում հոգին չի ճանաչում տարածություն ու ժամանակ: Եվ, ո՞վ գիտե, գուցե իրականում մարդու աներևույթ և հետմահու գոյությունը թերևս ավելի հսկայածավալ ու երկարակյաց գտնվի, քան հենց ինքը՝ մեծն տիեզերքը:

Ինչեւ, վերոնշյալ խնդիրների վիճարկումն ու պարզաբանումը թողնելով աստղագետների և աստվածաբանների դասին՝ մենք կփորձենք խնդրին տալ գրականագիտական մոտեցում և լուծում: Բանն այն է, որ իբրև տիեզերքի ամենաբանական հյուկե՝ մարդն աշխարհում կառուցում է իր ուրույն աշխարհը, որտեղ ապրում և արարում է, կամքջում սեփական կյանքն իր նմանների կյանքին: Լինելով հասարակական էակ՝ մարդը ոչ միայն ապրում է իր նմանների միջավայրում, այլև մեծապես կախված է այդ միջավայրի կարծիքից: Եվ որքան էլ ցանկանա խուսափել հասարակական կարծիքից ու ազդեցությունից, մարդ արարածը չի կարող հասնել ամբողջական ազատության: Հասարակության այդ ազդեցիկ ու ճնշող կարծիքն էլ շատ հաճախ պայմանավորում է մարդու ձևավորումն իբրև անհատ և վարքագիծն այս կամ այն իրավիճակում:

Ուեալիստ Սինքլեր Լուիսը կերտել է կերպարներ, որոնք ավելի քան խոսուն են և համոզիչ: Անդրադառնալով իր հերոսների մարդկային արժանիքներին կամ թերություններին՝ Լուիսը նաև հիմնավորում է այդ ամենը: Լուիսյան հերոսներն այն հասարակության ու միջավայրի ծնունդն են, որտեղ ապրում և արարում են: Սա է պատճառը, որ որքան էլ քննադատի իր հերոսներին, Լուիսը մինչև վերջ չի մեղադրում նրանց, զիջման տեղ է բողնում: Գլխավոր մեղավորը, ըստ հեղինակի, այն արատավորված միջավայրն է, որ պայմանավորում է նրա հերոսների գործողությունները:

Փաստորեն, տարօրինակ չպետք է քվա այն հանգամանքը, որ իր ստեղծագործություննում Լուիսը մարդկային կերպարներին զուգահեռ ստեղծում է նաև ամերիկյան հասարակության ու միջավայրի «կերպարը»: Գրողն իր նպատակին հասնում է և՛ ուղիղ, և՛ անուղղակի եղանակներով: Մի դեպքում նա նկարագրում է այդ միջավայրը, ինչպես իր հերոսներին կնկարագրեր, մեկ այլ դեպքում բույլ է տալիս, որ հերոսներն իրենց խոսքով ու գործողություններով հասնեն միջավայրի պատկերմանը, իրենց ծնունդ տված հասարակության քողազերձմանը:

Մաքառող անհատի և հետաղեմ հասարակության անխուսափելի քախումը լավագույնս պատկերված է Լուիսի «Գլխավոր փողոցը» վեպում, որ նրա ստեղծագործական ժառանգության լավագույն էջերից է: «Մեր հարյուրամյակի մեծագույն սատիրիկը ամերիկյան գրականության մեջ» /Гиленсон, 1985: 3/, ինչպես Գիլենսոնն է Լուիսին անվանում, կարողացել է մեծագույն վարպետությամբ գծել այն անշրջետը, որ բաժանում է Քերոլ Սիլֆորդին՝ մի կողմից, և Գոֆեր Պրերիի անկիրը հասարակությանը՝ մյուս կողմից:

«Ընդհանուր առմամբ, լուիսյան հերոսներին կարելի է բաժանել երկու խմբի՝ քաղքենիների և ըմբոստների», – նշում է գրականագետ Հոնեն /Lewis, Babbit, 1962: 9/: Հիրավի, վեպի հենց ամենասկզբից ընթերցողի առջև հառնում է Քերոլի «Ընթացու» կերպարը, որ պատրաստ է սեփական կյանքն ու ապագան զոհել՝ ի շահ և ի բարօրություն իր հայրենակիցների: Քերոլը կենսախիճն է և կյանքով լի, քանիզ «նրա մարմնի յուրաքանչյուր քիջը կենդանի է՝ նիհար դաստակները, սերկելի երանգ ունեցող մաշկը, անկեղծ աշքերը, սև մազերը: Ինչ էլ որ դառնար, նա երբեք չէր կարող անշարժ լինել» /Lewis, 2002: 2/:

Ավարտելով քոլեջը՝ Քերոլն անխախտ որոշում է կայացնում. «Ահա՝ թե ինչ եմ անելու քոլեջն ավարտելուց հետո: Ես ձեռքիս տակ եմ առնելու այս գյուղաքաղաքներից մեկն ու այն գեղեցիկ դարձնելու» /Lewis, 2002: 5/: Ի՞նչ իմանար հերոսուիին, որ սեփական ազնիվ նպատակադրումներն անազնիվ արձագանք են զունելու գավառական քաղաքի բնակիչների սրտերում: Վարպետի իր գրչով զուգահեռներ անցկացնելով անշունչ քաղաքի ու նրա բնակիչների միջև՝ Լուիսը փաստում է, որ Գոֆեր Պրերին մի վայր է, որի բնակիչները նույնքան դատարկ են ու ողորկ, որքան իրենց տները: Եվ հիրավի, «դա ապրելու վայր չէր, ո՛չ հավանականորեն, ո՛չ էլ հասկանալիորեն: Մարդիկ... Նրանք նույնքան անշուր էին, որքան իրենց տները, նույնքան տափակ, որքան իրենց դաշտերը» /Lewis, 2002: 20/:

Բայց ի՞նչն է ստիպում Քերոլին նման անձնազոհ քայլի գնալ: Նա կարող էր ընտանիք կազմել, ապրել սովորական կյանքով և երջանիկ լինել, ինչպես շատուշատ կանայք: Բայց ոչ: Հերոսուիխն նրանցից չեն, ովքեր վախենում են կյանքի մատուցած դժվարություններից և դրանց դիմակայելու անկարողության մտքից: Նա մեկը չէ այն շատերից, ովքեր փորձում են ապրել ընդհանուրի սահմանած օրենքներով ու կարգուկանոնով՝ միշտ քայլել անհանգիստ ու անկանգ ամբոխի ամենախիստ հատվածով, որպեսզի եթե ճակատագիրը որոշի չար կատակ խաղալ ու արձակել իր սև նետը, հանկարծ իրեն չփառչի: Քերոլը ոչ միայն թաքնվող չէ, այլև աղաղակող է ու ըմբոստացող: Սերժելով իրեն սիրահարված համակուրսեցու առաջարկը՝ նա ասում է. «Անկեղծ ասած, ես երեխաներ սիրում եմ: Բայց կամ շատուշատ կանայք, որ կարող են տնային տնտեսուիի լինել, իսկ ես... դե, եթե դու ՈՒՆԵՍԿՕ համալսարանական կրթություն, դու պետք է օգտագործես այն ի շահ աշհարիի» /Lewis, 2002: 7/: Սա հերոսուիու սոսկ անձնական և անհատական բողոքը չէ: Ի սկզբանե ունակ լինելով մտածելու ոչ միայն իր մասին՝ Քերոլ Սիլֆորդը բողոքում է նաև նրանց անունից, ովքեր, թերագնահատելով սեփական արժանիքները, ապրում են մի կյանքով, որ իրենց հարիր չէ: Արդեն իսկ ժողովրդավարության անխախս ուղին բռնած քաններորդ դարասկզբի ամերիկյան հասարակության մեջ կինը կարող էր ոչ միայն հոգատար մայր ու բանինաց տնտեսուիի լինել, այլև, եթե դա թույլ էր տալիս նրա կրթական բազան, լինել բարձրակարգ մասնագետ՝ ի բարօրություն իր ազգի: Հերոսուիխն գիտակցարար թե ենթագիտակցարար հասկանում էր, որ ուժեղ է այն երկիրը, որի ամեն մի բնակիչը զբաղվում է իր գործով, ծավալում իր ունակություններին առավելագույնս համապատասխան գործունեություն՝ անկախ սեռային ու տարիքային պատկանելությունից:

Կյանքը կապելով սառն ու անկյանք բժիշկ Ուիլ Քենիքորի հետ՝ Քերոլը փաստորեն զոհում է իր անձը մշտապես մտքում դեգերող հայրենանվեր մտայնությունն իրագործելու համար: Սերը չէ, որ հերոսուիուն նդում է ամուսնության, այլ գավառական Գոփեր Պրերի ընկնելու և այն բարի կախարդուիու իր ձեռքերով բարեկարգելու հեռանկարը: Սակայն մեծ է Քերոլի հիասքափությունը տեղ հասնելու հենց առաջին պահից: Ամեն բան վկայում է այն մասին, որ նրան չի հաջողվելու այնքան արագ ավարտելու իր առաքելությունը, որքան նախապես պլանավորել էր: Շուրջը սառնություն է ու անտարբերություն: Հիշնք թեկուց այն դրվագը, երբ «ճան զննեց իրենց ննջասենյակը, և դրա տաղտկությունը սողոսկեց իր հոգին...» /Lewis, 2002: 24/:

Փաստորեն, հենց սկզբից հեղինակը համենասուրթյան մեջ է դնում Գոփեր Պրերիի բնակիչների ու Քերոլի անհամատելելի և քենուացված կերպարները: Այն աշխարհը, որտեղ ապրում է հերոսուիխն, և այն մյուսը, որ տիրում է նրա հոգում, կարծես հակապատկերներ լինեն: Քանիզի «հաստատականությունը, որով տղամարդիկ թերանն էին առել իրենց սիզարները, դարձնում էր նրանց դեմքերի ստորին մասը արտահայտչականությունից զուրկ, ծանր անկոչ: Նրանք նման էին քաղաքական գործիչների՝ ցինիկ կերպով քվեները բաժանելիս: Ինչպես կարող էին նրանք հասկանալ իրեն» /Lewis, 2002: 255/: Վերջին հոետորական հարցն ավելի է խտացնում խնդրի՝ առանց այն ել մռայլ

գույները: Հիասքափությունը կատարյալ էր, բայց պետք չէր նահանջել ու կոտրվել: Քայլ առ քայլ, դրվագ առ դրվագ քողազերծվում է ամերիկյան հասարակության՝ առաջին հայացքից անկեղծ դեմքը:

Բայց որևէ անձի կամ երևույթի մասին ամբողջական կարծիք կազմելու համար հարկ է այն ուսումնասիրել բազմակողմանիորեն: Հենց այդպես էլ վարդում է հեղինակը, երբ կառուցում է ամերիկյան հասարակության «կերպարը»: Լուիսը երբեք մի ամբողջական էց կամ գլուխ չի նվիրում ճահճի նման դեպի իրեն ձգող հասարակության ամբողջական դիմակազերծնանը: Պարզապես մերթընդերք, որտեղից որտեղ մի դիպուկ արտահայտությամբ հեղինակը քողազերծում է քանիներորդ դարի սկզբի ամերիկացու նտածելակերպը մի նոր դիտանկյունից: Սի դեպքում առաջ է քաշվում հասարակության շողորորք, քծնող պատկերը՝ փաստելով, որ «քոլորը խոնարհվում էին նրան (Քերոլին – Ն. Զ.)՝ անձանորները և ամենքը, և ստիպում նրան զգալու, որ իրենք ուզում էին նրան, որ նա պատկանում էր այդ միջավայրին» /Lewis, 2002: 49/: Մեկ այլ դրվագում երևան է գալիս ամերիկյան հասարակության անձաշակ ու անկուչտ բնույթը, հասարակություն, որ սեղանից անգամ օգտվել չի կարողանում: Խրախճանքների ու քեֆերի ժամանակ ուսում են ոնց պատահի, իսկ վերջացնելուց հետո նրանց առաքելությունն ավարտված է համարվում, կարող են տուն գնալ: Մեջքերենք դրվագն ամբողջությամբ. «Ուտելիքները՝ – նրանք սկսեցին փափսալ: Նրանք անելու բան ունեին: Նրանք կարող էին փախչել իրենք իրենցից: Ընկան ուտելիքի վրա՝ ճիփ սենդվիչներ, թխուն տորք, դեղատան պաղպաղակ: Նույնիսկ, երբ ուտելիքը տարան, նրանք շարունակում էին կենսախինդ մնալ: Նրանք կարող էին գնալ տուն այժմ արդեն ցանկացած պահի և ընել» /Lewis, 2002: 41/:

Գալիս է կասկածի ու երկմտության պահը: Ծի՞շտ է արդյոք վարվել հերոսուիին՝ նման կերպ դասավորելով իր կյանքը: Արժե՞ր իր անձը նվիրաբերել հանուն այն մարդկանց կենսակերպի բարեփոխման, ովքեր իրենք չեն կամենում փոխվել, ընդդիմանում են Քերոլի մեջ տեսնելու այն մարդասիրական և անձնութաց զիդը, ինչպես ժամանակին հրեաներն էին մերժում Քրիստոսին: Եթե գոնե ընտանիքում երջանիկ լիներ, հերոսուիին գուցե միսիքարվեր, սփոփանք գտներ ընտանեկան զերմության մեջ: Բայց Ուիլլը այն նույն հասարակության մանրակերտն է, որի ծնունդն է ինքը: Օդի մեջ կախվում է լինել- չլինելու հարցը. «Արդյոք մեծագույն սիա՞լ էր իմ ամուսնանալը նրա հետ» /Lewis, 2002: 83/: Կասկածի տեղիք է տալիս նաև հասարակության վերաբերմունքը Քերոլի նկատմամբ, ինչը հերոսուիին շատ լավ է գիտակցում, որովհետև «հասկանում է, որ իմքը չգիտեր՝ արդյո՞ք մարդիկ սիրում էին իրեն: Տղամարդիկ ժպտում էին, բայց արդյոք սիրու՞մ էին: Նա սիրելի էր կանանց միջավայրում, բայց արդյոք մե՞ն էր նրանցից» /Lewis, 2002: 67/: Ո՛չ, պատասխանը միանշանակ բացասական էր:

Առաջ գնալով նախապես պլանավորած իր սիրեմայով՝ Լուիսը մի կողմ է քողնում երկմտանքն ու հեռվից հեռու գուգադրումը և մի քայլ առաջ անցնում՝ ուղղակիորեն համեմատության մեջ դնելով ուսյալ հերոսուին և զավառական քաղաքի հոգևոր սնանկությունը: Հասարակությունն այս դեպքում խտացվում և

մարմնավորվում է Դեյվ Դայերի կերպարում: Դեյվի և նրա կնոջ գրույցից պարզ է դառնում այն յուրօրինակ ճորտատիրական մորեցումը, որ տղամարդը դրսւորում էր դեպի կինը: Քաղաքակրության և քաղաքավարության հետք անգամ չի կարող լինել այնտեղ, որտեղ տղամարդը հասարակության առաջ նվաստացնում է իր կնջը, ծաղրում նրան և նվաստում մյուսների պատասխան ծաղրին: Խոսքը խնդրու առարկա վեպի այն հարվածի մասին է, որտեղ «Դեյվ Դայերը վրա է տալիս. «Ինչքա՞ն ես ուզում: Մի դոլարը հերի՞ք է»: «Ո՛չ, հերիք չէ: Ես պետք է գիշերազգեստներ գնեմ երեխաների համար»: Ջերոլլ հասկանում է, որ տիկին Դայերը սովոր էր այս ստորացմանը: Նա գիտակցում է, որ տղամարդիկ, մասնավորապես Դեյվը, դա հրաշալի ժեստ էին համարում: Նա սպասեց. ինքը գիտեր, թե ինչ էր ապասվում, և դա պատահեց: Դեյվը ճշաց. «Որտե՞ղ է այն տաս դոլարը, որ քեզ տվեցի անցած տարի, - և նայում է մյուսներին՝ սպասելով նրանց ծաղրին: Նրանք ծաղրում են» /Lewis, 2002: 56/:

Հատվածն առավել քան խոսուն է և ավելորդ մեկնարաննան կարիք չունի: Սիայն ներկայացնենք Ջերոլի պատասխան մոտեցումն այս խնդրին: «Սառը և հավասարակշռված՝ Ջերոլլ քայլում է դեպի Ջենիքորն ու հրամայում. «Ես այժմ համեստորեն խնդրում եմ տալ ինձ այն փողը, որով պետք է ուտելիք գնեմ քեզ համար: Եվ այսուհետ հիշիք: Հաջորդ անգամ չեմ խնդրելու: Պարզապես սովամահ կլինեմ: Հասկացա՞ր ինձ: Ես չեմ կարող շարունակել ճորտ լինել»: Նա 50 դոլար մեկնում է նրան և դրանից հետո հիշում էր նրան կանոնավոր փող տալ... երբեմն» /Lewis, 2002: 57/:

Հատկանշական է, որ Սինքլեր Լուիսի արվեստի տասնյակ գրաբննադատներից մեկը՝ Սենկենը, շեշտը դնելով «Գլխավոր փողոցը» վեպում արծարծվող այսուժետային թեմաներից մեկի՝ Ջենիքոր ամուսինների փոխհարաբերությունների վրա, հենց դա է համարում վեպում առաջնայինը: Սենկենի համոզմամբ՝ այս վեպը «ամերիկյան ընտանիքի տիպիկ պատմություն է, ընտանիքի, որ գտնվում է իր կազմավորման առաջին փուլում, նախքան ամուսինն ու կինը իրենց տեղը կզիշեն հորը և մորը» /Lewis, 1962: 18/: Ավելի ուշ միևնույն Սենկենը նաև հավելում է, որ «պարուն Լուիսը պատկերում է համազոր պայքարը մեծագոյն խորաքափանցությամբ: Նա չափազանց խելացի է որևէ մեկի կողմն անցնելու, հարցը պարզապես մեկի դեմ ուղղված ճառի վերածելու համար: Ամենից առաջ նա չափազանց խելացի է, որպեսզի անցնի Ջերոլի կողմը, ինչպես տաս վիպասաններից ինը կվարվեին» /Lewis, 1962: 18/: Փաստորեն, Սենկենի համոզմամբ վեպի առանցքը կազմում է տիպիկ ամերիկյան ընտանիքներից մեկի պատմությունը՝ իբրև դասական օրինակ նմանատիպ բազմաթիվ ընտանիքների:

Կարելի է համաձայնել վերոբերյալ տեսակետի հետ, քայլ մասամբ: Սեր համոզմամբ՝ այստեղ գոյություն ունի մասի և ամբողջի հարաբերակցության խնդիր, որտեղ մասը ընտանիքն է, ամբողջը՝ հասարակությունը: Այո՛, ընտանիքի, տղամարդ – կին փոխհարաբերությունների խնդիրը վեպի առանցքային հարցերից է, քայլ խնդրին ավելի խորն է արմատացած: Ջենիքորների ընտանիքը թերի է, անլիարժեք, քանի որ անլիարժեք է այն հասարակությունը, որ ծնունդ է տվել նրան: Եթե հասարակությունը ոչ թե հրճվեր Դայերի

խոսքերից, այլ պահարակեր նրա ստոր քայլը, հաջորդ անգամ նա կխուսափեր սեփական կնատյացությունն ի ցույց դնելուց:

Ինչեւ: Վերադառնալով Քերոլ – հասարակություն կոնֆլիկտին՝ նշենք, որ նմանատիպ դեպքերում արդյունքը երեք ուղղությամբ կարող է զարգանալ: Կամ հերոսը պարտվում է ու վայր դնում զենքերը, կամ հաղթանակ տոնում՝ հաջողությամբ ի կատար ածելով իր (ազնիվ կամ անազնիվ) նկրտումները, կամ ել միջավայրն է հաղթանակ տոնում ի դեմս հերոսի հերթական զոհին իր ամենավոլ ճահճուտը ներքաշելով: Քերոլը պարտություն է կրում: Արատավորված, բայց և տասնամյակների ու դարերի ընթացքում խոր արմատներ գցած հասարակական կարգն այժման էլ դյուրին չէ փոխելը: Եվ «իր անմեղության մեջ նա չփառեր, որ ամբողջ քաղաքը կարող էր քննարկել իր ցնցոտիները, իր մարմինը: Նրա մեջ այնպիսի զգացողություն էր, կարծես իրեն մերկ քարշ են տալիս Գլխավոր փողոցով» /Lewis, 2002: 82/: Շրայի օղակներն ավելի են սեղմվում, օղը սկսում է չքաղաքարել Քերոլին: Եվ «նա չեր կարող հանդուժել քարնված ծաղրանքը: Նա ուզում էր փախչել: Ուզում էր քարնվել քաղաքների մեծահոգի անտարբերության մեջ: Բարեփոխե՞լ քաղաքը: Ամբողջը, որ նա ուզում էր, այն էր, որ իրեն հանդուժեն» /Lewis, 2002: 77/:

Լուխսը սիրելի հերոսուհուն նահանջի երեք ուղի է առաջարկում, երեք հնարավոր լուծումներ, որ կօգնեն նրան կտրվել այն անհանդուժող միջավայրից, որում հայտնվել է:

Առաջինը որդին է՝ Հյուջը, ով լուսավոր կետ է դառնում Քերոլի կյանքում: Ի դեպ, հասարակությունն այստեղ էլ է իր սև գործն անում՝ փորձելով ապագա մորք տրամադրել զավակի դեմ: Հասարակությունը մի մեծ շարժիչ ուժ է, մի հսկա սիրտ և ուղեղ, որ ամեն ինչ զգում է ու գիտակցում: Նա զիսի հերոսուհու թոյլ կողմերը, հասցրել է նրան ճանաչել և այժմ էլ փորձում է թունավորել այս ուժեղ անհատականության ուղեղը՝ զգուշացնելով. «Այժմ, երբ դու պատրաստվում ես մայր դառնալ, սիրելի կու, դու կզրկվես քո այս բոլոր գաղափարներից ու կիանդարտվես»: Նա զգում է, որ ուզած- չուզած ինքն ընդգրկվում է տնային տնտեսուհիների ասամբլեայի մեջ. այժմ նա սուրճ կիսմի, երեխային կօրորի և կիսուի բարություներից» /Lewis, 2002: 187/: Բայց մարդը, ով սրտացավ ու հոգատար է մի ամբողջ քաղաքի բնակչության համար, չի կարող չսիրել իր իսկ զավակին: Ավելին, ի հեճուկս իրեն շրջապատող շաղակրատների մի ամբողջ քանակի՝ «Հյուջը դառնում է նրա ապրելու իմաստը, ապագայի բարեկարգության երաշխիքը, երկրպագության տաճարը» /Lewis, 2002: 188/: Երեխան լցնում է Քերոլի հոգում գնալով խորացող դատարկությունը, մայրական բերկրանքը լցնում նրա նուրբ սիրտը, բայց փախուստային տրամադրվածությունը մոռացնել չի տալիս:

Եվ Քերոլը փախչում է, այս անգամ արդեն ֆիզիկապես: Մի քանի ամիս նա ապրում է մեծ քաղաքում՝ Վաշինգտոնում՝ հեռու Գոֆեր Պրերիից և Ուիլլից: Փախուստի այս երկրորդ փորձին շատ շանցած հաջորդում է երրորդը, երբ հերոսուհին փորձում է իրականությունը խեղդել սիրեկանի գրկում: «Նրա մեջ նա (Քերոլ – Ն.Զ.) հայտնաբերեց և երիտասարդության իր կարիքը, և այն փաստը, որ երիտասարդությունը կողցունի իրեն: Երիկը չէ, որի մոտ նա պետք

փախչեր, այլ համընդիանուր և առույգ երիտասարդությունը դասարաններում, ստուդիաներում, օֆիսներում, Ընդհանուր հարցերի դեմ ուղղված բոլոր հանդիպումներում» /Lewis, 2002: 278/: Բայց իզուր: Ամեն ինչ ապարդյուն է լինում: Ո՞չ երեխան, ո՞չ փախուստը, ո՞չ էլ սիրեկանը Քերոլ Սիլֆորդին չեն կտրում դառը և անխուսափելի իրականությունից: Հերոսուհին մի նոր՝ հերթական հիասքափությունն է ապրում, որ սառը ցնցուղ է լինում երիտասարդական նրա կրակոտ ավյունի համար:

Ավելորդ չի լինի նշել, որ Սինքրել Լուիսի գրական ժառանգության բազմաթիվ քննադասները միանգամայն իրարամերժ ու բոլոր դեսպերում հետաքրքիր տեղեկություն են մեզ հաղորդում: Հայտնի լուսագետ Գիլենսոնը, օրինակ, ավելի քան վաստակ է, որ Լուիսը, «վարպետանալով ամերիկացու առօրյան և նրա հավաքական կերպարը կառուցելու մեջ, թերանում էր իր հերոսների ներաշխարհն ու հոգևոր հարաբերությունները պատկերելու գործում՝ դա բողնելով իր գործընկերներին, ինչպես, օրինակ, Ֆոլքներին ու Հեմինգուեյին» /Гиленсон, 1972: 8/: Ի դեպ, Գիլենսոնը միակը չէ, ով այդպես է կարծում: Լուիսի՝ մեծ հոգեբան լինելը, հերոսների հոգևոր աշխարհի և ընդհանուր հոգեկերտվածքի բացահայտման ունակությունը շատերի մոտ է կասկածի տեղիք տալիս: Դրա փոխարեն Շերվուդ Անդերսոնը հարցին մոտենում է որոշակի վերապահումներով՝ փաստելով, որ «այս մարդը՝ մեր կյանքի արտաքին մակերևույթին հայտնված նորությունների ընկալման լրագրողի իր սուր հոտառությամբ, շատ քան է հայտնաբերել մեր մասին և նրա, թե ինչ ձևով ենք ապրում մեր մեծ ու փոքր քաղաքներում, քայլ ես համոզված եմ, որ զյուղում ապրող յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի կյանքում կան գործող ուժեր, որ բվում է՝ վրիպել են պարոն Լուիսի աշքից» /Lewis, 1962: 27/:

Ինչեւ չկասկածելով լրջմիտ գրականագետների կարծիքների արժանահավատությանը և դրանով հանդերձ շվախենալով սույն հարցի առնչությամբ մեր ուրույն տեսակետի հնարավոր սխալականության մտքից, փաստենք, որ անկախ ամեն ինչից, «Գլխավոր փողոցն» անկասկած Լուիսի ամենահաջողված վեպերից է, իսկ Քերոլ Սիլֆորդը հեղինակի լավագույն կերպարներից է: Լուիսը երկնում, միանգամայն համոզի կերպով զարգացնում և իր տրամարանական հանգուցալուծմանն է հասցնում Քերոլի ուժեղ կերպարը: Հեղինակը սիրում է հերոսուհուն, քայլու իբրև ռեալիստ գրող՝ գիտակցում է, որ նրա պարտությունն անխուսափելի է: Քերոլը ոչ թե պարզապես պարտվում է, այլև կատարելապես ջախջախվում: Եվ դա տեղի է ունենում այն պահին, եթք նա գիտակցում է, որ ինքը փախչելու տեղ չունի: Տգիտությունը, կեղծիքն ու անտարբերությունը սորոսկել է նաև մեծ քաղաք կամ այնտեղ էլ է եղել ի սկզբանե. արատն ամենուր է. «Նա հայտնաբերում է, որ կառավարական բյուրոներում կանանց մեծամասնությունը ապրում էր անառողջ կյանքով՝ ճաշելով մի քանի բոպեռվ իրենց խցկված բնակարաններում: Բայց նա նաև հայտնաբերում է, որ գործարար կանայք կարող են ստեղծել ընկերական և թշնամական հարաբերություններ նույնքան անկեղծորեն, որքան տղամարդիկ, և կարող են հաճույք ստանալ երանությունից, որին ոչ մի տնային տնտեսութիւն չի հասնի. ազատ կիրակի» /Lewis, 2002: 327/: Եվ հերոսուհին կատարում է

նահանջի վերջին քայլը՝ վերադառնալով այնտեղ, որտեղից փախել էր: Պարտությունը կատարյալ էր, բայց սպասելի և տրամաբանված: Իմաստ չկար մնալու այնտեղ, այն նոր միջավայրում, որ նույնքան արատավորված էր, որքան Գոֆեր Պրերին: Եվ Քերոլը վերադառնում է ընտանիք՝ դառնալով մեկն այն բազմահազար տնային տնտեսություններից, որոնց կյանքն ամենասովորական առօրյա է: Գոֆեր Պրերին իր Գլխավոր փողոցով հաղթանակ է տոնում:

Ի դեպ, խոսելով Լուիսի ոճի յուրահատկությունների մասին, ոռոս գրականագետ Մուլյարչիկը գրողի ոճի յուրահատուկ գիծը համարում է «հակասական յուրօրինակությունը»: Ըստ նրա՝ Լուիսը սիրում է անսպասելի հանգուցալուծումներ տալ իր վեպերին: Մուլյարչիկը անբացատրելիորեն արագացված է համարում «Գլխավոր փողոց» վեպի վերջնամասը, որտեղ հերոսությն մի քանի ամիս անցկացնում է Վաշինգտոնում՝ բացեիրաց հակադրվելով «Գլխավոր փողոցին» /Մուլյրիկ, 1968: 21/: Սենք մեզ թույլ ենք տայիս չհամաձայնել այս տեսակետի հետ:

Իրքն ամփոփում՝ ևս մեկ անգամ փաստենք, որ ամերիկյան ռեալիզմի ականավոր ներկայացուցիչ Սինքլեր Լուիսը իր արվեստով կարողացել է ստեղծել մեկը մյուսից հետաքրքրիր և խոսուն կերպարներ, որոնք դառնում են ընդհանրական և տիպիկ ներկայացուցիչը մարդու իրենց տեսակի: Այդ կերպարները միասին դառնում են հասարակագիտական ու գրական իսկական շտեմարան քաններու դարի սկզբի ամերիկյան կենսակերպի, ամերիկացու տեսակի բացահայտման գործում: Լինելով տղամարդ գրող՝ Լուիսին այդուհանդերձ հաջողվել է ստեղծել Քերոլ Սիլֆորդի ուժեղ և համոզիչ կերպարը, որ անկասկած հեղինակի ամնահաջողված հերոսներից է: Համարձակ ու ինքնամոռաց դեմ դուրս գալով քաղքենի աշխարհի տգիտության դեմ՝ հերոսությն ի վերջո պարտություն է կրում՝ հասկանալով, որ միայնակ ի զորու չէ պայքարել մի արատի դեմ, որ արմատացած է ոչ միայն Գոֆեր Պրերիում, այլև նրա Գլխավոր փողոցով տարածվում է ամբողջ երկրով մեկ...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Lewis S. A collection of critical essays. N. J.: Englewood Cliffs, 1962.
2. Lewis S. Babbitt. Moscow: Foreign Languages Publishing House, 1962.
3. Lewis S. Main Street. New York: New American Library, 2002.
4. Гиленсон Б. А. Америка Синклера Льюиса. Москва: Наука, 1972.
5. Гиленсон Б. А. Синклер Льюис (100 лет со дня рождения). Москва: Знание, 1985.
6. Мулярчик А. С. Американский роман в 20-е годы XX века. М.: МГУ, 1968.

Н. ЗАКАРЯН – *Столкновение Кэрол Милфорд и общества в романе «Главная улица» Синклера Льюиса.* – В статье исследуется роман выдающегося представителя критического реализма Синклера Льюиса «Главная улица». Исследуется возникший конфликт между героиней романа Кэрол Милфорд и обществом, окружающим ее. На примерах убедительно показана суть борьбы героини и неизбежность ее поражения. Одна, сражаясь против всеобщего невежества, героиня в конце понимает, что не сможет осуществить свою мечту – увидеть хотя бы один провинциальный городок преображенным: благоустроенным и раскрепощенным.

Ключевые слова: Синклер Льюис, роман «Главная улица», критический реализм, американское общество, провинциальный город, всеобщее невежество

N. ZAKARYAN – *The Clash between Carol Milford and the Society in the Novel “Main Street” by Sinclair Lewis.* – The paper studies the novel “Main Street” by Sinclair Lewis, a great American novelist of the 20th century, a prominent representative of critical realism. It studies the serious conflict between the heroine, Carol Milford and the society surrounding her. Both the essence of the struggle of the heroes and the inevitability of her defense are presented convincingly and with examples. Struggling alone against overall stupidity and ignorance Carol Milford eventually understands that she can't realize her dream – to make yet one provincial town better.

Key words: Sinclair Lewis, the novel “Main Street”, critical realism, rebel figure, American society, provincial town, overall ignorance